ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը.
Սմբատ Սաիյան

2. Զբաղեցրած պաշտոնը.
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.
Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2020 թվականի փետրվարի 25-27-ը

4. Հրավիրող կողմը.
Եվրասիական տնտեսական հանձնաժողով

***5.* Գործուղման նպատակը**.
Մասնակցություն ԵԱՏՄ անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության ոլորտի ներկայացուցիչների խորհրդակցությանը:

6. Քննարկված թեմաները.
1) Տեղեկատվություն ԵԱՏՄ անդամ պետություններում «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի վավերացման ներպետական գործընթացների վերաբերյալ,
2) Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակումն ապահովող գործընթացների կազմակերպա-տեխնիկական հարցերի քննարկում,
3) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նորմերի կիրառման նպատակով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազոր մարմինների, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև փոխգործակցության կիրառման կարգի» (այսուհետ՝ Կարգ) նախագծի լրամշակում, այդ թվում՝ ԵԱՏՄ հանձնաժողովի իրավաբանական վարչության դիտողությունների և առաջարկությունների հաշվառմամբ,
4) Կարգի հավելվածների (ձևաչափերի) լրամշակում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Փետրվարի 26-ին խորհրդակցության մասնակիցները տեղեկատվություն տրամադրեցին իրենց պետությունում ընթացող՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի վավերացման ներպետական գործընթացների վերաբերյալ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ստորաբաժանման պատասխանատուի մասնակցությամբ քննարկվեց համաձայնագրի կիրարկումն ապահովող տեղեկատվության փոխանակության հետ կապված հնարավոր խնդիրները:

Միաժամանակ, քննարկվեց նաև ռուսական կողմի ներկայացրած առաջարկությունը՝ իրականացնել փորձնական ծրագիր, որի շրջանակներում կհստակեցվեն ընթացակարգերն ու տեխնիկական կառուցակարգերը:

Միջպետական բանկի մասնագետների մասնակցությամբ անդրադարձ կատարվեց կենսաթոշակի արտահանման մեխանիզմներին՝ հարցը քննարկելով պետական գնումների վերաբերյալ ներպետական օրենսդրությունների պահանջների տեսանկյունից:

Մեկ անգամ ևս քննարկվեց բժշկական հետազոտությունների ձևաչափը և այն լրացնելու կարգը, մասնավորապես լրացնելու իրավասությունը պետության բժշկասոցիալական փորձաքննություն (համալիր զննումն) իրականացնող պետական մարմնին կամ բժշկական հետազոտություն իրականացնող առողջապահական կազմակերպությանը վերապահելու հարցը:

Կողմերի առաջարկությամբ հարցն անհրաժեշտ է քննարկել տեղերում և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

Քննարկվեցին նաև Կարգի նախագծի այն դրույթները, որոնց վերաբերյալ կողմերից, ինչպես նաև ԵԱՏՄ հանձնաժողովի իրավաբանական վարչությունից ստացվել էին առաջարկներ:

Փետրվարի 27-ին ավարտվեցին Կարգի նախագծի քննարկումները և ամփոփվեցին դրանց արդյունքները, ինչպես նաև քննարկվեցին կենսաթոշակների վճարման փոխադարձ հաշվարկների մեխանիզմներն ու դրանց արտացոլումը համապատասխան ձևաչափում, վճարման ցուցակի, փոխադարձ ստուգումների, տեղեկատվության ցանկի, ընդունած որոշման վերաբերյալ տեղեկացման ձևաչափերի նախագծերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կարգի նախագծի քննարկման արդյունքներով որոշվեց՝

1) հնարավորինս արագացնել պետություններում «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի վավերացման ներպետական գործընթացները,

2) դիմել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ տեղեկատվության փոխանակության փորձնական ծրագիր իրականացնելու համար,

3) ավարտին հասցնել նախագծի մշակման աշխատանքները: Ներկայացված առաջարկությունների, համաձայնեցված մոտեցումների հիման վրա խորհրդակցության արձանագրությամբ սահմանված ժամկետում հանձնաժողովը կլրամշակի կարգի նախագիծը և կարծիքի կուղարկի կողմերին, որոնք դրա վերաբերյալ իրենց դիրքորոշումը կներկայացնեն հանձնաժողովին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկությունները հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության համաձայն՝ դրանում նշված ժամկետում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ՍՄԲԱՏ ՍԱԻՅԱՆ

Signed by: SAIYAN SMBAT 3509750020

02.03.2020թ.